ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Նախագիծ

Կ-017-30.06.2012,10.09.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկում, որն առաջարկում է հաշվի սպասարկման լավագույն պայմանները (հաշվում առկա միջոցների համար վճարվող տոկոսի չափ, հաշվի սպասարկման վճար և այլն), պարտապանի անունով բացում է սնանկության հատուկ հաշիվ և դրան է հաշվեգրում պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները.»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-րդ հոդվածով.

«***Հոդված 29.1.*** **Կառավարչի կողմից սնանկության հատուկ հաշիվ բացելը**

Կառավարիչը պարտապանի անունով սնանկության հատուկ հաշիվ բացելու նպատակով կնքում է բանկային հաշվի պայմանագիր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկի հետ, որն առաջարկում է հաշվի սպասարկման լավագույն պայմանները (հաշվում առկա միջոցների համար վճարվող տոկոսի չափ, հաշվի սպասարկման վճար և այլն):»:

Հոդված 3. Օրենքի 76-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «յոթնօրյա» բառը փոխարինել «հնգօրյա» բառով.
2) 3-րդ մասում «ութերորդ» բառը փոխարինել «վեցերորդ» բառով.
3) 5-րդ մասի 3-րդ պարբերությունում և 7-րդ մասում «15» թվերը փոխարինել «10» թվերով.

4) 8-րդ մասը «օրենքով սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: